**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«13» հունիսի 2025 թ.  N 85-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 35-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը և հաշվի առնելով Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի 2025 թվականի հունիսի 9-ի N Ե/487-25 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի մարտի 14-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 35-Ա հրամանում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) նախաբանում «10.1-ին հոդվածի» բառերից հետո լրացնել «3-րդ մասի» բառերը,

2) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հաստատել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից 2025 թվականի մարտի 4-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ներկայացված՝ քաղաքաշինության բնագավառում նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «BIM տեխնոլոգիաների հիմունքներ» միջոցառման ծրագիրը և ծրագրին շնորհել 9 կրեդիտ:

3) 1-ին կետից հետո լրացնել նոր՝ 1.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հաստատել «BIM տեխնոլոգիաների հիմունքներ» միջոցառման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

6/12/2025

X

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**Հավելված**
**ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի**
**2025 թվականի** փետրվարի 13 **-ի N** 85 **-Ա հրամանի**

## «BIM տեխնոլոգիաների հիմունքներ»

## միջոցառման ժամանակացույց

| Հ/Հ | Ամսաթիվ | Ժամ | Թեմայի անվանում | Դասախոսի անուն և ազգանուն | Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը | Միջոցառման կրեդիտները | Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը | Մասնակցության վճարի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | | | | | |
| 1 | Մարտի 27-31 | 18.00 | «BIM տեխնոլոգիաների հիմունքներ» | Շինարարական արտադրության տեխնոլոգիայի և կազմակերպման (ՇԱՏԿ) ամբիոնի դասախոս Աշոտ Մխիթարյան, ՃՇՀԱՀ | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, Տերյան 105 <u>վերապատրաստման դասընթաց</u> | 9 կրեդիտ | <u>I կարգի մասնագետ, II կարգի մասնագետ, III կարգի մասնագետ</u>, 01-06, 11-26, 34 մասնագիտություններ (համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 23.08.2023թ. N 06-Ն հրամանի) | <u>36 000 ՀՀ դրամ</u> |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ՇԱՏԿ ամբիոնի վարիչի ժ/պ, տ.գ.թ. Արմինե Բագրատի Ղուլյան | | | | |
| 2 | Ապրիլի 28-30 | 18.00 | «BIM տեխնոլոգիաների հիմունքներ» | Շինարարական արտադրության տեխնոլոգիայի և կազմակերպման (ՇԱՏԿ) ամբիոնի դասախոս Աշոտ Մխիթարյան, ՃՇՀԱՀ ՇԱՏԿ ամբիոնի վարիչի ժ/պ, տ.գ.թ. Արմինե Բագրատի Ղուլյան | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, Տերյան 105 <u>վերապատրաստման դասընթաց</u> | 9 կրեդիտ | <u>I կարգի մասնագետ, II կարգի մասնագետ, III կարգի մասնագետ</u>, 01-06, 11-26, 34 մասնագիտություններ (համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 23.08.2023թ. N 06-Ն հրամանի) | <u>36 000 ՀՀ դրամ</u> |
| 3. | Հունիսի 4-6 | 18.00 | «BIM տեխնոլոգիա | Շինարարական արտադրությ | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի | 9 կրեդիտ | <u>I կարգի մասնագետ, II կարգի մասնագետ,</u> | <u>36 000 ՀՀ դրամ</u> |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ների հիմունքներ» | ան տեխնոլոգիայի և կազմակերպման (ՇԱՏԿ) ամբիոնի դասախոս Աշոտ Մխիթարյան, ՃՇՀԱՀ ՇԱՏԿ ամբիոնի վարիչի ժ/պ, տ.գ.թ. Արմինե Բագրատի Ղուլյան | ազգային համալսարան, ք. Երևան, Տերյան 105 վերապատրաստման դասընթաց | | III կարգի մասնագետ, 01-06, 11-26, 34 մասնագիտություններ (համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 23.08.2023թ. N 06-Ն հրամանի) | |
| 4. | Հունիսի 25-30 | 18.00 | «BIM տեխնոլոգիաների հիմունքներ» | Շինարարական արտադրության տեխնոլոգիայի և կազմակերպման (ՇԱՏԿ) ամբիոնի դասախոս Աշոտ Մխիթարյան, ՃՇՀԱՀ ՇԱՏԿ | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, Տերյան 105 վերապատրաստման դասընթաց | 9 կրեդիտ | I կարգի մասնագետ, II կարգի մասնագետ, III կարգի մասնագետ, 01-06, 11-26, 34 մասնագիտություններ (համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 23.08.2023թ. N 06-Ն հրամանի) | 36 000 ՀՀ դրամ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ամբիոնի վարիչի ժ/պ, տ.գ.թ. Արմինե Բագրատի Ղույան | | | | |